



Tempus



Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և  
կառավարում  
(La MANCHE)

ԲՈՒՀ-երի և ոչ առևտրային ու հասարակական  
կազմակերպությունների, մասնավոր սեկտորի  
միջև համագործակցության հիմնախնդիրները  
կրթության միջազգայնացման պայմաններում

Հայաստանում ազգային կոնֆերանս  
Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Համալսարան

19, հունիսի, 2015, Երևան



Tempus



## Հիմնախնդրի ներկայացում

Ժամանակակից տնտեսական պայմաններում տեղային և միջազգային մակարդակներով մրցունակ և որակյալ կրթությունն անհնար է պատկերացնել միակողմանի, փակ համակարգի տեսքով, համակարգ, որտեղ ԲՈՒՀ-երը մատուցում են միակողմանի կրթություն, առանց հաշվի առնելու շուկայի և դրանում գործող ոլորտների պահանջներն ու առանձնահատկությունները:



Tempus



Որպես շուկայի կարևորագույն մասնակիցներ և ԲՈՒՀ-երի պոտենցյալ կամ գործող գործընկերներ առանձնացվում են՝

- մասնավոր և պետական ոլորտի ներկայացուցիչները,
- ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունները,
- միջազգային կազմակերպությունները և այլն:



Tempus



## Համագործակցության առավելությունները

Նշված համագործակցության շրջանակներում կարելի է առանձնացնել հետևյալ հիմնական առավելությունները՝

- 1) Հնարավորություն իրականացնել կյանքի կոչել և գործնականորեն կիրառել մշակվող գաղափարները,
- 2) Հնարավորություն շահագործել գործընկերների տրամադրության տակ եղած ռեսուրսները (տեխնիկա, տեխնոլոգիաներ, ծրագրային փաթեթներ, փորձը, նորագույն գրականություն և այլն),
- 3) Հնարավորություն մշակել համատեղ փոխշահավետ կրթական ծրագրեր,



Tempus



## Համագործակցության առավելությունները

- 4) Հնարավորություն համատեղ ձևավորելու միջազգային չափորոշիչներին համապատասխան, որակյալ և մրցունակ կրթական միջավայր,
- 5) Հնարավորություն ձևավորելու որակյալ և գործնական աշխատանքային ունակություններ ունեցող ուսանողների հենք
- 6) Հնարավորություն կատարելագործելու ԲՈՒՀ-երի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ունակությունները, ովքեր հնարավորություն կունենան տեսական գիտելիքներն անընդհատ թարմացնել և ամրապնդել գործնականում:



Tempus



Միևնույն ժամանակ արդյունավետ չէ հետևել միայն “երկկողմանի կապերի” զարգացման սկզբունքին, ԲՈՒՀ-գործարար ոլորտ, ԲՈՒՀ-ՀԿ կամ ոչ առևտրային կազմակերպություններ, մոռանալով համագործակցության ակտիվ գործունեության մեջ ընգրկել որքան հնարավոր է մեծ քանակությամբ շահառուներ: Լավագույն միջազգային փորձը վկայում է , որ գիտելիքահեն ժամանակակից տնտեսությունը կարիք ունի ոչ միայն առևտրային կազմակերպությունների և համալսարանների ներազդեցության, այլև ֆինանսավարկային, պետական կառույցների, տարաբնույթ սոցիալական միավորումների, ինչպես նաև ՉԼՄ-ների ընդգրկման: Տվյալ իրավիճակում առավել արդյունավետ փոխազդեցությունը ցանցային համագործակցությունն է:



Tempus



Արդյունքում, առկա է մի այնպիսի իրավիճակ, երբ ԲՈՒՀ-երը, որոնք ակտիվ չեն ցանցային համագործակցության տեսանկյունից, կարճ ժամանակահատվածում հայտնվում են անելանելի վիճակում՝ կորցնելով ֆինանսական կայունությունը և հեղինակությունն ու շուկայում ունեցած դիրքը, ինչպես նաև միջազգային գիտական և կրթական համագործակցության հնարավորությունները:

Եվ, որ ամենակարևորն է՝ իջնում է այդ ԲՈՒՀ-երի շրջանավարտների հաջողությամբ աշխատանքի տեղավորվելու հավանականությունը, ինչը բերում է ուսանողության արտահոսքի՝ տեղային, իսկ հետո նաև միջազգային մակարդակներով՝ էլ ավելի բարդացնելով ստեղծված իրավիճակը:

19 հունիսի, 2015

Ա. Աբրահամյան, Կ. Թումանյան



Tempus



## Համագործակցության հնարավոր խնդիրները

Առանձնացնելով մասնավոր սեկտորի, ոչ առևտրային և հասարակական կառույցների ու ԲՈՒՀ-երի միջև համագործակցության առավելությունները, անհրաժեշտ է ընդգծել նաև, որ առկա են նաև բազմաթիվ խնդիրներ նշված ոլորտում, որոնք կարելի է ամփոփել հետևյալում՝

- *Մարդկային գործոն.* Ելնելով մասնագիտական պատրաստվածության առանձնահատկություններից և աշխարհայացքային տարբեր կարծրատիպեր, համալսարանների շատ դասախոսներ չեն կարողանում ընդհանուր լեզու գտնել գործարար ոլորտի, ոչ առևտրային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Բացի այդ, միջազգային համագործակցության շրջանակներում առկա են բազում հիմնախնդիրներ կապված անձնակազմի տարբեր ունակությունների և գիտական ներուժի հետ, ինչը կարող է լուրջ խոչընդոտներ առաջացնել հաջող համագործակցության համար:

19 հունիսի, 2015

Ա. Աբրահամյան, Կ. Թումանյան





- *Գործունեության ժամային անհամապատասխանություն.* Օրինակ, գիտական հետազոտության միջինացված տևողությունը թեկնածուական թեզի պատրաստման տեսքով կազմում է 3 տարի: Սակայն առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների համար դա կարող է չափազանց երկար ժամկետ հանդիսանալ կոնկրետ վերջնարդյունքներ ստանալու տեսանկյունից:
- *Գործունեության և համագործակցության համընդհանուր կանոնների ձևավորման անհրաժեշտություն.* Հաշվի առնելով տեղային և միջազգային օրենսդրությունները, սպասվող վերջնարդյունքները և շարունակական համագործակցության պահանջները:



Tempus



- *Խնդիրներ կապված համագործակցող կազմակերպությունների միջև ներքին մշակույթների միջև տարբերության հետ. Այսպիսի խնդիրներ առաջանում են մասնավորապես միջազգային համագործակցության ժամանակ, երբ դրանք ավելի ակնհայտ են երևան գալիս համաալարանների ու մասնավոր և հասարակական ու ոչ առևտրային կազմակերպությունների համագործակցության ժամանակ:*
- *Համագործակցության մոդելի համապատասխանեցման անհրաժեշտություն. Գործունեության կոնկրետ իրավիճակի և կոնկրետ գործընկերների առկայությամբ անհրաժեշտություն է առաջանում համապատասխանեցնել դասական համագործակցության մոդելները տվյալ իրավիճակին, քանի որ մի մոդելը կարող է միջազգային համագործակցության պայմաններում իդեալական հանդիսանալ համագործակցության համար, սակայն կարող է վատ կամ լիովին չհամապատասխանել տեղային գործընկերների համագործակցության համար:*



# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ